

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՄԻՋԱԶԳԱՅՆԱՅՄԱՆ ԲԱԶՄԱՄԱԿԱՐԴԱԿ
ԳՈՐԾԸՆԹԱՅՆԵՐ

Կ.Ա.Թումանյան

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԲՈԼՈՆՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԱՍ

- **Կրթությունը** - ռազմավարական ապրանք է և հասարակության փոփոխություններին արձագանքող կարող ուժ, որը ապահովում է իր գոյությունը եւ բարգավաճումը գլոբալացվող աշխարհում.
- Ներկայումս, կա բարձրագույն կրթության նկատմամբ համաշխարհային պահանջարկի մի կտրուկ աճ ,ինչը կարելի է համարել մարտահրավեր ԲՈՒՀ-երի համար իրենց ռազմավարական նպատակներին հասնելու համար
- ԵՄ 2020 նոր ռազմավարությունը նույնացնում է երկու հիմնական ոլորտներ
 - ✓ բարձրագույն կրթության միջազգայնացումը
 - ✓ բարձրագույն կրթության որակի բարելավումը եւ բուհական շրջանավարտների աշխատունակությունը ,այն է՝ մի շարք հմտություններ, գիտելիքներ ու անձնական որակներ, որոնք նպաստում են շրջանավարտների մասնագիտական հաջողությանը և լավ աշխատանքի ձեռքբերմանը

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՄԱՆ ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

- Բարձրագույն կրթության համակարգերի համադրելիությունը:
Եռաստիճան`
 - *բակալավրիատ*
 - *մագիստրատուրա*
 - *ասպիրանտուրա*
- Ստուգարքային միավորների համադրելիություն` *կրեդիտներ*
- Հարակիժ մասնագիտությունների ուսումնական պլանների համադրելիություն
- Ուսումնառության վերջնարդյունքների` ԲՈՒՀ-երի շրջանավարտների աշխատունակության,` համադրելիություն
- Գիտական հետազոտությունների որակը

ԲՈՒՀ-ի ՄԻՋԱ ԶԳԱՅՆ ԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԸ

ԲՈՒՀ-ի միջազգայացման գործընթացը առնչվում է՝

- *ԲՈՒՀ-ի ուսանողների հետ*
- *ԲՈՒՀ –ի պրոֆեսորադասախոսական կազմի և ադմինիստրացիայի հետ*

ԲՈՒՀ-ի միջազգայնացման գործընթացի շրջանակներում դիտարկվում են

- *ԲՈՒՀ-ի հավաստագրման, ճանաչման և գնահատման հարցեր*
- *ԲՈՒՀ-ի և համապատասխան հասարակական կազմակերպությունների միջազգային համագործակցության հարցեր*

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ

- Օտարերկրյա ուսանողների հավաքագրում
- Փոխանակման ծրագրերի կազմակերպում
- Ուսանողների անհատական տեղաշարժում
- Ուսանողների արտասահմանյան ուսուցման կազմակերպում ՀԿ –ի միջոցով պետական աջակցության հովանու տակ
- Ուսանողների արտասահմանյան պրակտիկայի և ամառային դպրոցների կազմակերպում

ՊՐՈՏԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ

- Դասախոսների փոխանակում
- Համատեղ հետազոտական ծրագրերի իրականացում
- Դասախոսների մասնագիտական փոխադարձ վերապատրաստում արտասահմանյան համալսարաններում
- Նույնանուն մասնագիտությունների կրթական ծրագրերի համատեղ մշակում
- Նույնանուն առարկայական ծրագրերի համատեղ մշակում
- Դասախոսների արագացված դասընթացների եւ ամառային դպրոցների կազմակերպում

ԲՈՒՀ-ի ՍԵՐՏԻՖԻԿԱՆԱՑՄԱՆ , ՃԱՆԱԶՄԱՆ և ՈՐԱԿԻ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ

- «Կրկնակի» դիպլոմների հատկացում
- Ստուգարքային միավորների համակարգ
- Ստացված կրթությունը հավաստացնող փաստաթղթերի միջազգային ճանաչումը
- Կրթության որակի գնահատման չափորոշիչների չափանիշները

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

- փոխանական ծրագրեր ԲՈՒՀ-ի վարչակազմի համար
- աշխատուժի կառավարում
- նյութական ռեսուրսների կառավարում
- խորհրդատվական եւ տեղեկատվական ծառայություններ
- գնահատման կարգի համադրություն

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՄԱՆ

4 ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

- 1. Mutual understanding approach – համակարգված մոտեցում
- 2. Skilled migration approach – որակավորված աշխատուժի ներգրավման ռազմավարություն.
- 3. Revenue-generating approach – եկամուտի ստացման ռազմավարություն
- 4. Capacity building approach – հնարավորությունների ընդլայնման ռազմավարություն

1.Բարձրագույն կրթության միջազգայնացման համակարգված մոտեցում

- Այս մոտեցումը հիմնված է երկրի զարգացմանը նպաստող երկարաժամկետ քաղաքական, մշակութային, ակադեմիական գործառույթների վրա
- Նման ռազմավարության իրականացում է՝
 - ✓ *ուսանողական և ակադեմիական շարժունության միջոցով ,ինչին նպաստում են ուսանողական կրթաթոշակների հատկացումը և ակադեմիական փոխանակման ծրագրերի իրականացումը*
 - ✓ *Բարձրագույն կրթության ինստիտուցիոնալ համագործակցությունների ստեղծմանը նպաստող ծրագրերի իրականացում*

Տվյալ մոտեցման իշխող սկզբունքը միջազգային համագործակցությունն է,այլ ոչ թե մրցակցությունը.

2. Որակավորված աշխատուժի միգրացիայի աջակցման ռազմավարություն

- Որակավորված հմուտ աշխատուժի ներգրավման ռազմավարությունը , ինչի նպատակն է տեղավորել աշխատանքի օտարերկրյա ընտրյալ մասնագետներին և տաղանդավոր ուսանողներին ընդունող երկրում ,որպես այդ երկրի տնտեսական զարգացման խթանման եւ բարելավման միջոց ,ինչը կնպաստի նաև գիտելիքների տնտեսության ոլորտում երկրի մրցունակության բարձրացմանը :
- Այս մոտեցման հիմնական գործիքն է`
 - ✓ *Ակադեմիական թոշակների համակարգ*
 - ✓ *Այդ երկրի բարձրագույն կրթության համակարգի ակտիվ ծրագրի խթանումը արտասահմանում*

3. Եկամուտ գեներացնող բարձրագույն կրթության միջազգայնացման ռազմավարությունը

- Այս ռազմավարությունը հիմնվում է համակարգված մոտեցումների և բարձր որակավորում ունեցող աշխատուժի ներգրավման վրա
- կրթական ծառայությունները առաջարկվում են լիարժեք վճարովի հիմունքներով, եւ չեն տրամադրվում պետական սուբսիդիաներ
- Օտարերկրյա ուսանողները տրամադրում են լրացուցիչ եկամուտներ կրթական հաստատություններին, խրախուսելով բուհերին իրականացնել բիզնես ռազմավարությունը միջազգային կրթական շուկայում
- Կառավարությունները, իր հերթին, տրամադրում են համալսարաններին զգալի ինքնավարության, ապահովում են բարձր հեղինակություն իրենց բարձրագույն կրթական համակարգին

Պետք է նշել, որ այն մոտեցումը, որը կենտրոնանում է եկամուտ գեներացնող ռազմավարությանը, ավելի քիչ է բնորոշ ԵՄ-ին:

Այդ պրակտիկան ավելի շատ բնորոշ է Միացյալ Նահանգների Ավստրալիայի ,ԱՊՀ երկրների միջազգայնացման գործընթացներին:

4. Հնարավորությունների ընդլայնման ռազմավարություն

- Խրախուսվում է բարձրագույն կրթության ձեռքբերումը արտասահմանում, օտարերկրյա կրթական ծառայություններ մատակարարող բուհերում, մատակարարների կրթական ծառայությունների.
- Այս մոտեցման կարևոր գործիք են հանդիսանում`
 - ✓ պաշտոնատար անձանց կազմի ,գիտնականների ,ուսանողների օտարերկրյա շարժունությանը աջակցող ծրագրերը
 - ✓ օտարերկրյա համալսարաններին, ծրագրերին եւ դասախոսներին բարենպաստ պայմանների տրամադրում երկրում առելտրային կրթական գործունեությունը իրականացնելու համար

ԱՅՍՊԻՍՈՎ

- Բարձրագույն կրթության միջազգայնացման գործընթացները կրում են բազմաստիճան բնույթ: Բազմազգ, ազգային, համալսարանական, անհատական. Յուրաքանչյուր մակարդակում, լուծվում են իրեն բնորոշ մարտահրավերներ. Բազմազգ եւ ազգային մակարդակներում սահմանվում են բարձրագույն կրթության միջազգայնացման շրջանակային պայմաններ, ուղղություններ ու մեխանիզմներ:
- Բարձրագույն կրթության միջազգայնացումը հրում է ԲՈՒՀ-ին փնտրել ուսանողներ այլ երկրներից: Էլ ավելի ու ավելի գլոբալացված աշխարհում ընդհանուր ուսանողական պայմանների, կրթական ծրագրերի և ուսումնական պլանների միջազգայնացումը ժամանակակից բարձրագույն կրթության, առանցքային տարր, որը օգնում է ուսումնական հաստատություններին պատրաստել շրջանավարտներ ապագայի համար, ստեղծել հարաբերություններ դեռևս միմյանց հետ առնչություն չունեցող ուսումնական հաստատությունների միջև :
- Սակայն, միջազգայնացումը որպես այդպիսին (միջազգային պայմանագրերով, համատեղ ծրագրերի իրականացմամբ, շարժունակության ծրագրերի), միշտ չէ, որ ուղղակիորեն նպաստում է կրթության որակի բարելավմանը :

Կրթության միջազգայնացումը Հայաստանում

Սկսած Հայաստանի անկախության առաջին օրվանից , սկսվեցին գանգվածային կրթական բարեփոխում ներ և այդ գործընթացը շարունակական է:

- Ազգային դպրոց:Ազգային դպրոցում պետք է կրթել մեր երկրի քաղաքացիներին, ովքեր պետք է ապրեն ազգի,ժողովրդի արժեքներին ու գաղափարներին , երկրի զարգացման և բարգավաճման ընդհանուր տեսլականին համապատասխան;
- Կրթության միջազգայնացման գործընթացը իրականացվում է բոլոր մակարդակներում:
- Գործում է 12-ամյա հանրակրթության համակարգ համապատասխան կրթության այսօրվա միջազգային չափանիշների :
- Գործում է բարձրագույն կրթության եռաստիճան համակարգը
- Միջազգային եվրոպական ծրագրերի շրջանակներում իրականացվում է բարձրագույն կրթության միջազգայնացում
- Գործում են հատուկ հիմնադրամներ ,որոնք խթանում են մեր երիտասարդների ուսուցումը արտասահմանյան ԲՈՒՀ-երում
- Իրականացվում են գիտահետազոտական համագործակցային և գրանտային ծրագրեր :

- ԲՈՒՀ-ում գործում են միջազգային համագործակցության բաժիններ, որոնք լուծում են ԲՈՒՀ-ի միջազգայնացման խնդիրները , որոնց աշխատանքի որակական ցուցանիշները ուղղակիորեն կախված է միջազգային բաժնի և ԲՈՒՀ-ի ադմինիստրացիայի, ֆակուլտետների, ամբիոնների դասախոսական կազմի համագործակցության մակարդակից :
- Միևնույն ժամանակ, յուրաքանչյուր կրթական հաստատության միջազգայնացման գործընթացը կախված է այդ հաստատության առանձնահատկություններից, նրա ֆինանսական և մարդկային ռեսուրսներից, նյութատեխնիկական , գիտական ներուժից, ուսանողների քանակից և ուսումնական հաստատության զարգացման ռազմավարական պլանի այլ հիմնական բաղադրիչներից :

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ